ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն - 2024

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից 2023 թվականին կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ

2023 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատանքային գործունեության հիմքում դրված էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, ՀՀ կառավարության հնգամյա ծրագիրը, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

2023 թվականին Կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման 1 հավելվածի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն բաժնի 77-88-րդ կետերի պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները՝ ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ, իրականացվել են հանրային քննարկումներ և մամուլի ասուլիսներ:

Ջրային տնտեսության ոլորտում ջրային կոմիտեի համակարգմամբ 2023 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

Համաձայն 2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական Կոմիտեի, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրված վարձակալության պայմանագրի, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից, 2023 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից որպես վարձակալական վճար ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 2,724.5 մլն դրամ:

Վերը նշված վարձակալության պայմանագրի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված ՆԼՋ 0001 լիցենզիայի համաձայն՝ յուրաքանչյուր տարի նախատեսվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների, այդ թվում՝ մանրածախ, սակագների վերանայում (ճշգրտում):

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի N324-Ա որոշմամբ սահմանվել է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման սակագների մեղմման նպատակով սուբսիդիայի չափերը, որի արդյունքում ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից հատկացվել 1,009.9 մլն դրամ՝ սուբսիդավորման համար:

2023 թվականի օգոստոսի 8-ին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն ՀԾԿՀ-ին ներկայացրել էր խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2023 թվականի սակագների վերանայման (ճշգրտման) հայտ: ՀԾԿՀ-ն ծառայությունների սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների ճշգրտման նպատակով 2023 թվականի ապրիլ, հունիս, հուլիս և հոկտեմբեր ամիսներին իրականացրել է մոնիթորինգ:

ՀԾԿՀ-ի 2023 թվականի նոյեմբերի 29-ի N 413-Ն որոշմամբ հաստատվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների մատուցման 2024 թվականի սակագները, որի համաձայն՝ սոցիալապես անապահով բաժանորդների համար 2024 թվականին սակագինը կմնա անփոփոխ՝ 180 դրամ, իսկ մյուս բաժանորդների համար՝ 205.992 դրամ:

ՀՀ կառավարությունը համարժեք սուբսիդավորմամբ կչեզոքացնի սակագնի ավելացումը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայություններից բաժանորդների համար:

Արդյունքում, 2024 թվականին խմելու ջրի սակագինը սպառողների համար կմնա անփոփոխ:

Իրականացվել են ներդրումների պլանավորման և ակտիվների կառավարման գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներ: Ուսումնասիրվել և վերլուծվել են Վարձակալի կողմից Ջրային կոմիտե ներկայացված ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները:

Ուսումնասիրվել են ՀՀ պետական ներդրումային ծրագրերով ջրամատակարարման համակարգերում նախատեսվող աշխատանքները և ներկայացվել են առաջարկություններ:

Ոռոգման նպատակով ջրառ իրականացնող «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 87.96 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը՝ նախորդ տարվա՝ 90.20 հազ. հա համեմատ 2.24 հազ. հեկտարով պակաս:

Դեռևս 2021 թվականից մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: 2023 թվականին շարունակվել և ավարտին է հասցվել ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքները: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են և վերանորոգվել կամ կառուցվել են և կահավորվել են «Արտաշատ», «Էջմիածին», «Արմավիր» և «Երևան» ջրօգտագործողների ընկերությունների կողմից շահագործվող թվով 748 ջրաչափական դիտակետեր: 2021-2023 թվականներին բոլոր 15 ՋՕԸ-երի և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքների մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ընդհանուր առմամբ տեղադրվել են 2235 հատ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներ:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով 3,246.8 մլն դրամ է հատկացվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 26 համայնքներում ջրամատակարարման համակարգերի վերակառուցման և կառուցման համար: 1,716.600 մլն դրամի աշխատանքները կատարվել են, մնացած գումարը հետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե՝ աշխատանքները հետագայում իրականացնելու նպատակով: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող և հրատապ լուծում պահանջող համայնքների

ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագրերի շրջանակներում 2023 թվականի ընթացքում Արարատի մարզի Դվին, Նոր Կյանք, Շահումյան, Արտաշատ, Ղուկասավան, Ոստան, Սիսավան, Բուրաստան, Արբաթ, Խաչփար բնակավայրերի շինարարական աշխատանքները ավարտվել են և հանձնվել են շահագործման: Թվով 5 բնակավայրերի (Ազատավան, Վերին Արտաշատ, Բերդիկ, Վերին Դվին և Նոր ուղի) շինարարության իրականացման համար հայտարարված մրցույթը կայացել է և շինարարության մեկնարկը կտրվի 2024 թվականին:

Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները իրականացվում են Վերակառուցման վարկերի, Եվրոպական ներդրումային բանկերի և Եվրամիության աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում 2023 թվականին իրականացվել են՝ ջրատարի կառուցում՝ 12,3 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում՝ 118,0 կմ, տնային մուտքագիծ՝ 55,7 կմ, անհատական տնային ջրաչափական հոր՝ 7107 հատ, կոյուղու ցանցի վերակառուցում՝ 6.5 կմ: Տարվա ընթացքում ներդրումները կազմել են 3,7 մլրդ դրամ:

Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման ծրագրի 4, 5, 6 և 7 Փաթեթներով շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2023 թվականի օգոստոսին և նախատեվում է ավարտել 2025 թվականի սեպտեմբեր ամսին:

2023 թվականին իրականացվել են. 17,6 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնման, 2,36 կմ երկարությամբ անհատական տնային միացումների խողովակաշարերի փոխարինման և 476 բաժանորդների ջրաչափական հանգույցների տեղադրման աշխատանքներ: Տարվա ընթացքում ներդրումները կազմել են 1,4 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 586-Ն որոշմամբ 50.9 մլն դրամ է հատկացվել Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կողբ բնակավայրում անշարժ գույքի և հողամասի ձեռքբերման համար: Ջրային կոմիտեն պետք է ձեռք բերեր «Խոր Արմատ» ՍՊԸ-ին պատկանող Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի 1-ին փողոցի թիվ 31/4, 31/5, 31/6 և 31/7 հասցեների հողատարածքներն ու շենք-շինությունները: Գործընթացի շրջանակներում 2023 թվականի հունիսի 2-ին նոտարական գրասենյակում կնքվել է առք ու վաճառքի պայմանագիր՝ նախատեսված գումարները 30-օրյա ժամկետում վճարելու նպատակով: Սակայն «Խոր Արմատ» ՍՊԸ-ն հրաժարվել է ընթացակարգով սահմանված հարկային հաշիվներ դուրս գրելուց՝ պատճառաբանելով, որ համաձայն չի վճարելու գործարքից առաջացող հարկերը: ՍՊԸ-ի մոտ գործարքից առաջացող հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը՝ 16.1 մլն ՀՀ դրամ և դրանց հատուցման վերաբերյալ ՍՊԸ-ի առաջարկությունը ներկայացվել է ՏԿԵՆ և կառավարության աշխատակազմ համապատասխան դիրքորոշում ստանալու նպատակով:

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 27-ի N635-Ն որոշմամբ 56.1 մլն դրամ է հատկացվել Երևանի բուսաբանական այգու տարածքում «Կյանքի պուրակ» նախագծի համար Սարկավագի փողոցի ջրանցքից մինչև Բուսաբանական այգու պարսպի հատվածը ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքները ավարտին հասցնելու համար: Շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ եկած խնդիրների պատճառով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել նախագծանախահաշվային փաստաթղթերում: Ջրային կոմիտեն դիմել է նախագծի պատվիրատուին՝ Երևանի

քաղաքապետարանին, նախագծող «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթում անհրաժեշտ լրամշակումներ և փոփոխություններ իրականացնելու համար:

ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի N1579-Ն որոշմամբ 449.97 մլն դրամ է հատկացվել խորքային հորերը տվյալների առցանց փոխանցմամբ 614 ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի ձեռքբերման համար: Ջրաչափերը ձեռք են բերվել և գնման գործընթացի արդյունքում տնտեսվել է 206.4 մլն դրամ, որը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի N2050-Ն որոշմամբ 65.4 մլն դրամ է հատկացվել ջրառի կետերը տվյալների առցանց փոխանցմամբ 167 ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերով կահավորելու համար: Ջրահաշվիչների մի մասի ուշ մատակարարման արդյունքում 5.5 մլն դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

Արդյունքում ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջրօգտագործման թույլտվություն ունեցող բոլոր ջրառի կետերը ջրաչափական սարքավորումներով կահավորելու համար ձեռք են բերվել 759 հատ հոսքաչափեր, որոնք տեղադրման համար տրամադրվել են ՋՕԸ-երին: Եվս 22 հոսքաչափ և 30 մակարդակաչափ կտրամադրվի 2024 թվականի 1-ին եռամսյակում:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 1754-Ն որոշմամբ 15.2 մլն դրամ է հատկացվել Մեծավանի ջրամբարի վերականգնման լրացուցիչ աշխատանքների համար և 7.0 մլն դրամ «Սյունիք» ՋՕԸ-ի սպասարկման տարածքում Մեղրի տեղամասի Արաքս-2 պոմպակայանի վերականգնման համար: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են:

Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2023 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2023 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 34.41 մլրդ դրամ՝ 2022 թվականի 31.88 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 2.53 մլրդ դրամ:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 95%՝ 2022 թվականի 94.2%-ի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 0.8%, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 71.9%՝ 2022 թվականի 69.5%-ի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 2.4%, որը նաև նախորդ տարիների համեմատ ամենաբարձր ցուցանիշն է:

2023 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 236.2 մլն կՎտ ժ կամ 10.23 մլրդ դրամ՝ 2022 թվականի 238.8 մլն կՎտ/ժամի դիմաց՝ 10.61 մլրդ դրամ կամ պակաս է ծախսվել 2.6 մլն կՎտ ժ՝ շուրջ 380.0 մլն դրամ: Ոռոգման ոլորտում էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 166.3 մլն կՎտ ժ կամ 7.8 մլրդ դրամ՝ 2022 թվականի 172.2 մլն կՎտ ժ՝ 8.1 մլրդ դրամի դիմաց կամ պակաս է ծախսվել 5.9 մլն կՎտ ժ կամ 300 մլն դրամ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ հաշվետվության համաձայն ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին և ջրի որակի համապատասխանությունը սանիտարական նորմերի (մանրէաբանական վերլուծություն անցած ջրի որակի պահանջներին համապատասխանող նմուշների տոկոսը) պահանջների կազմել է 98.6 %:

2023 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը՝ Երևան քաղաքում եղել է 23.2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում 20.5 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում 20.2 ժամ/օր:

Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում ջրաչափությունը 2023 թվականին կազմում է 99.8%, նախորդ տարվա 99.76% համեմատ:

2023 թվականի մայիսի 11-ին ընդունվել է «Ոռոգման նպատակով 2023 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության N 704-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2023 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170.0 մլն խոր.մ:

Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովության դեֆիցիտը մասնակի մեղմելու/ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ 2023 թվականի հուլիսի 12-ին ընդունվել է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-254-Ն օրենքը, որի համաձայն 2023 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակը ավելացվել է 70 մլն խոր.մ-ով և սահմանվել է մինչև 240 մլն խոր.մ:

2023 թվականի մայիսի 14-ից մինչև սեպտեմբերի 15-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 228.234 մլն խոր.մ ջուր, նախորդ տարվա ոռոգման շրջանում բաց է թողնվել 165.063 մլն խոր.մ ջուր, կամ ավել է բաց թողնվել շուրջ 63.17 մլն խոր.մ ջուր: Արփա-Սևան թունելով 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լիճ է տեղափոխվել շուրջ 126.760 մլն խոր.մ ջուր, 2022 թվականին՝ 168.598 մլն խոր.մ դիմաց կամ պակաս է տեղափոխվել շուրջ 41.838 մլն խոր.մ ջուր: Սևանա լճի մակարդակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1900.17 մ, նախորդ տարվա նույն օրվա դրությամբ եղել է 1900.28 մ: Նախորդ տարվա համեմատ Սևանա լճի մակարդակը իջել է 11 սմ-ով:

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի N484-Ն որոշմամբ հատկացված՝ 2021 թվականի Սևանա լճից բաց թողնված ջրի 170 մլն խոր.մետրը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլ.էներգիայի վաճառքից ստացված գումարի շրջանակներում «Ջրառ» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող Սևան-Հրազդան ոռոգման համակարգից սնվող Արտաշատի ջրանցքի տարբեր հատվածների և գլխամասային հանգույցի, Ստորին Հրազդանի ջրանցքի 1-ին հերթի գլխամասային հանգույցի և 2-րդ հերթի ջրանցքի, ինչպես նաև Արզնի Շամիրամ ջրանցքի 2-րդ հերթի օբյեկտներում իրականացվել են 624.0 մլն դրամ ընդհանուր արժեքով, 3085 գծմ ջրանցքների հիմնանորոգման աշխատանքները:

«Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում» ծրագրի «Արփա-Սևան թունելի ընթացիկ շահագործում և պահպանում» միջոցառմամբ 2023 թվականին հատկացվել է 270.0 մլն դրամ:

«Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավում» միջոցառմամբ աշխատանքները մեկնարկել են 2022 թվականին՝ շուրջ 220.1 մ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածներն ամբողջությամբ վերանորոգվել և ավարտվել են 2023 թվականին: Միաժամանակ 2023 թվականին ձեռք է բերվել թունելի 244.7 մ ընդհանուր երկարությամբ առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը: Գարնան վարարումների հալոցքի ջրերը թունելով Սևանա լիճ տեղափոխելով պայմանավորված՝ նախատեսվում է շինարարական աշխատանքներն իրականացնել 01.09.2024-31.03.2025 /7 ամիս/ ժամանակահատվածում:

Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

Վեդու ջրամբարը կառուցվում է ՀՀ Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կոտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը: 2017 թվականի մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի շինարարական աշխատանքների մեկնարկը: Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցում ծրագրի շրջականներում շարունակվում են «Վեդի պատվարի և օժանդակ կառուցվածքների նախագծում և կառուցում» պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

2023 թվականին իրականացվել է ջրամբարի պատվարի լիցք՝ 10,5 մ բարձրությամբ (ալյուվյալ գրունտ, քարալիցք և կավ), կուլվերտում D=1400մմ և D=800մմ խողովակների տեղադրում, մեկնարկել է շահագործման տնակի շինաշխատանքները, ավարտին է մոտենում հեղեղային ջրթողի շինարարական աշխատանքները, տեղադրվել են ստուգիչ-չափիչ սարքավորումները և կատարվել են տվյալների հավաքագրում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի կառուցման ծրագրով իրականացվել է 3260մ ջրագծի կառուցում:

Կապսի կիսակառույց ջրամբարը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման շինարարական պայմանագիրը կնքվել է 2023թ ապրիլի 21-ին: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի հունիսի 9-ին: Իրականացվում են մոբիլիզացիոն և գետի ջրի հեռացման համակարգի կառուցման աշխատանքները, ինչպես նաև Կապալառուի կողմից զուգահեռաբար մշակվում են ոռոգման թունելի և ինյեկցիոն աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ Մեթոդների մասին հայտարարագրերը: 2023 թվականին իրականցվել է 12,260,599.98 եվրո գումարի կանխավճարի վճարում:

Փոքր և միջին ջրամբարաշինություն ծրագրում ներառված 15 ջրամբարներից՝ Աստղաձորի, Ելփինի, Քասախի, Լիճքի և Արթիկի մասով նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն ավարտման փուլում են, իսկ Արգիճիի ջրամբարի նախագծման աշխատանքների ժամկետներն երկարաձգվել են՝ տարածքում ենթակառուցվածների (ՓՀԷԿ) առկայության պատճառով: Մնացած 9 ջրամբարների մասով ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեում ՀՀ կառավարության 31.03.2022թ-ի N 423-Ն որոշման հիմքով ներգրավված փորձագիտական խմբի և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի թիմի մասնագիտական աջակցությամբ նախատեսվում է իրականացնել իրագործելիության ուսումնասիրություն:

Ներկայումս առավել մանրամասն աշխատանքներ են տարվում Ասիական Զարգացման բանկի հետ համատեղ՝ Կարմիր գյուղի, Գառնահովիտի և Գետիկի ջրամբարների մասով առկա տեղեկատվության ուսումնասիրության հավաքագրման ուղղությամբ: Այս աշխատանքների, հետագայում նաև խորհրդատուի կողմից տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության արդյունքներով հնարավորություն կստեղծվի անհրաժեշտության դեպքում վերը նշված 9 ջրամբարներից որոշների փոխարեն իրականացնել առավել նպատակահարմար գնահատված ջրամբարների նախագծման և կառուցման ծրագրեր: Ջրամբարաշինության ծրագրի շրջանակներում ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման գործընթացներին հնարավորինս լայն մասնակցություն ապահովելու նպատակով դրանք իրականացվում են բաց մրցութային ընթացակարգերով՝ միաժամանակ, միջազգային գործընկերների հետ

համագործակցության բոլոր հարթակներում ՀՀ կառավարության կողմից իրականացվող ջրամբարաշինության ծրագրի իրականացման վերաբերյալ իրազեկելով:

Օրվա կարգավորման թվով 31 ջրավազանների կառուցման և վերակառուցման համար, Ջրային կոմիտեի հետ կնքված համապատասխան պայմանագրերի շրջանակներում Խորհրդատու կազմակերպության կողմից ներկայացվել են օրվա կարգավորման թվով 28 ջրավազանների նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթները, որոնց վերաբերյալ ստացվել են քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական եզրակացություններ: Ներկայացված փաթեթները գտնվում են համալիր փորձաքննության փուլում, որոնց դրական եզրակացությունների արդյունքում 2024 թվականի առաջին կիսամյակում կմեկնարկեն Օրվա կարգավորման ջրավազանների շինարարության մրցույթները: Օրվա կարգավորման թվով 31 ջրավազաններից չեն իրականացվել 3 ջրավազանների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները: Ջրավազաններից 1-ը նախնական քննարկման փուլում հանվել է՝ հաշվի առնելով ջրօգտագործող ընկերության և Խորհրդատու ընկերության կողմից ներկայացված հիմնավորումները՝ նշված ջրավազանի կառուցման աննպատակահարմարության վերաբերյալ, իսկ մյուս 2-ը չեն իրականացվել՝ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքները Խորհրդատուին չտրամադրելու պատճառով:

«Ոռոգման համակարգերի զարգացման» ծրագրի շրջանակներում՝ Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները մեկնարկել են 2018 թվականին և իրականացվել սահմանված ժամկետներում: 2023 թվականին շարունակվել են միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման աշխատանքները: 2023 թվականին վերակառուցվել են երկրորդ կարգի ջրանցքների 45 կմ և ներտնտեսային ցանցերի 17 կմ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածներ:

Ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառման շրջանակներում 2023 թվականին ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերում հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել «Արմավիր», «Երևան», «Արտաշատ» և «Արարատ» ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում գտնվող թվով 5 օբյեկտներում: Նշված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

ՀՀ Արարատի մարզի «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում III գոտու ձախ հեռացնող ջրանցքի հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում կառուցվել է 1586գծ.մ ջրանցք, որից 1177մ՝ R80 տիպի երկաթ-բետոնե կիսախողովակներ, 372մ՝ 630 մմ տրամագծի դյուկեր և 37մ՝ 800 մմ տրամագծի ակվեդուկ:

ՀՀ Արարատի մարզի «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում IV գոտու հեռացնող ջրանցքի վերականգնման աշխատանքների շրջանակներում կառուցվել է 600մ երկարությամբ 400մմ տրամագծի պոլիէթիլենային խողովակաշար:

ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն-1 պոմպակայանի 2-րդ հերթի մղման ավազանից 1-ին հերթի մղման ավազան ջուր տեղափոխող D=500մմ տրամագծով, L=190գծ.մ երկարությամբ մետաղական խողովակաշարի տեղադրման աշխատանքների շրջանակներում կառուցվել է 195մ երկարությամբ 500մմ տրամագծի մետաղական խողովակաշար:

ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի բաժանարար N 2 («Դամբուլներ» կոչվող հողատարածքների ոռոգման ներտնտեսային 1000մ երկարությամբ) ջրանցքի վերակառուցման աշխատանքների շրջանակներում կառուցվել է 1000մ երկարությամբ LR-40 տիպի երկաթ-բետոնե վաքերով ջրանցք:

«Երևան» ՋՕԸ-ի կողմից սպասարկվող Մասիսի տարածաշրջանի Դաշտավան, Նորամարգ, Դարբնիկ, Մասիս, Զորակ, Սիս և Սայաթ-Նովա համայնքների ինքնաշատրվանող խորքային հորերի բաժանարար կետերի փականներով և ջրաչափերով կահավորման աշխատանքների շրջանակներում Դաշտավան, Նորամարգ, Դարբնիկ, Մասիս, Զորակ, Սիս և Սայաթ-Նովա համայնքներում գործող թվով 70 ինքնաշատրվանող խորքային հորերը կահավորվել են տուրբինային ջրաչափական սարքավորումներով (իմպուլսային ելքով) և փականներով:

Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման նպատակով իրականացվել են՝ 172.5 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ: Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

2023 թվականի հակահեղեղային առաջնահերթ միջոցառումներից ավարտվել և շահագործման է հանձնվել ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2000 մ հատվածում» աշխատանքները:

«Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600մ և ափերի ամրացում շուրջ 150 մ Ճամբարակ խոշորացված համանքի Մարտունի գյուղի տարածքում» և «Նարեկի սելավատարի հունի մաքրում 2945 մ և ափերի ամրացում 380 մ» աշխատանքների ավարտը նախատեսվում է 2024թվականին:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 27-ի N635-Ն որոշմամբ 19.98 մլն դրամ է հատկացվել ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանանշանների միջակայքում գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ 130 մետր երկարությամբ և 8 մետր խորությամբ ողողված պատնեշի վերականգնման աշխատանքների համար: Նախագծանախահաշվային փաստաթղթերը ձեռք են բերվել: Նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը ՌԴ սահմանապահ զորքերի միջոցով Թուրքական կողմի հետ համաձայնեցում ձեռք բերելուց հետո աշխատանքները կմեկնարկեն:

ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի /Դեբեդավան, Բագրատաշեն, Պտղավան, Հաղթանակ բնակավայրերի/ տարածքում Դեբեդ գետի ափի ամրացման և սահմանային ճանապարհի /հայ-վրացական սահման/ ստեղծման աշխատանքների իրականացման նպատակով աշխատանքներ են տարվում նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը վրացական կողմի հետ համաձայնեցնելու համար: Վրացական կողմից համաձայնությունը ստանալու դեպքում կնախաձեռնվի շինարարության ծրագիրը մեկնարկելու աշխատանքներ: